Հայկական ԽՍՀ—Армянская ССР
Ա. ՍՊԵՆԴԻԱՐՈՎԻ ԱՆՎ. ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՈՊԵՐԱՅԻ ՅԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԹԱՏՐՈՆ
**Государств. ордена Ленина театр оперы и балета им. А. А. Спендиарова**

# ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

**Օպերա 4 գործողությամբ**

## ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ Ն. Ա. ՌԻՄՍԿԻ—ԿՈՐՍԱԿՈՎԻ

(ՈՊԵՐԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ)

# Царская невеста

**Опера в 4-х актах**

Музыка Н. А. Римского—Корсакова

(КРАТКОЕ СОДЕРЖАНИЕ ОПЕРЫ)

ՅԵՐԵՎԱՆ 1940 ЕРЕВАН

14 FEB 2018

## ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

### 1-ին գործողություն

*Սենյակ բոյարին (խոշոր ազնվական) Գրյազնոյի տանը: Գրյազնոյը խորասուզված է իր սիրած գեղեցկուհու վերաբերյալ մտքերի մեջ: Նրա ուղարկած խնամախոսներին մերժողական պատասխան էյին տվել, որովհետև աղջիկն արդեն խոստացված էր յեղել ուրիշի՝ Իվան Լըկովին:*

*Հյուրերի գալուստն ընդհատում է Գրյազնոյի մտորումը: Ներս են մտնում օպրիչնիկները (Իվան Գրոզնի Թագավորի թիկնապահ գնդի զինվորներ)՝ Մալյուտա Սկուրատովի հետ, նաև Իվան Լըկովը և գերմանացի բժիշկ Բոմելյին:*

*Լըկովը պատմում է օտար յերկրների մասին, որտեղից նորերս էր վերադարձել:*

*Մտնում են գուսլի (տավիղ) նվագողները և յերգիչների խումբը, որոնք Թագավորին փառաբանող յերգ են յերգում: Այդ յերգին հաջորդում է «Յար-խմել» կոչված պարերգը:*

*Ներս է գալիս Գրյազնոյի սիրուհին՝ Լյուբաշան: Հյուրերի խնդրանքով Լյուբաշան մի տխուր յերգ է յերգում: Հյուրերը ցրվում են: Գրյազնոյը Բոմելիին չի թողնում գնալ ու խնդրում է սեր հարուցող կախարդական դեղ վաճառել իրեն: Թաքնված Լյուբաշան լսում է նրանց խոսակցությունը:*

*Բոմելիի գնալուց հետո Լյուբաշան սկսում է հանդիմանել Գրյազնոյին: Առավոտյան ժամերգության զանգերի ձայնն ընդհատում է նրանց խոսակցությունը: Գրյազնոյը գնում է: Լյուբաշան յերդվում է գտնել իր ախոյանին:*

### 2-րդ գործողություն

*Ալեքսանդրովսկայա արվարձանը Մոսկվայի մոտ.*

*Յերեկոյան ժամերգությունից հետո ժողովուրդը վանքից*

II-29057 գր

ցրվում է։ Յերգելով անցնում են մի խումբ օպրիչնիկներ։ Բժիշկ Բոմելիի տան դռնակից դուրս են գալիս յերկու յերիտասարդներ։ Ամբոխը շրջապատում է նրանց և ստիպում է դեն գցել «հերետիկոսից» ստացած դեղերը։ Ժողովուրդն աստիճանաբար ցրվում է։ Իրենց տան դարպասի մոտ յերևում է Սաբակինի վաճառականի աղջիկ Մարֆան՝ իր ընկերուհի Դունյաշայի ու դայակ Պետրովնայի հետ։ Մարֆան ընկերուհուն պատմում է իր նշանածի՝ Իվան Լըկովի մասին։

Նրանց մոտով անցնում է Իվան Վասիլևիչ Գրոզնի Թագավորը։ Նա խոր ուշադրությամբ նայում է Մարֆայի վրա։ Մարֆան Թագավորին չի ճանաչում, բայց նրա հայացքը սարսափ է ազդում աղջկան։ Թագավորը դանդաղ հեռանում է։

Գալիս են Լըկովն ու Մարֆայի հայրը։ Նրանք միասին տուն են մտնում։ Լյուբաշան գաղտագողի մոտենում է Սաբակինի տան պատուհանին։ Նա ուզում է տեսնել իր ախոյանին։ Մարֆայի գեղեցկությունը ապշեցնում է Լյուբաշային. վերջինս վորոշում է ազատվել այդ ախոյանից։ Բոմելիի պատուհանը թակելով, նա խնդրում է այնպիսի կախարդական դեղ, «վորը մարդուն բոլորովին չկործանի, այլ նրան միայն գեղեցկությունից զրկի»։ Բոմելին այդպիսի դեղի համար իբրև վարձատրություն պահանջում է Լյուբաշայի սերը։

Լյուբաշային այդ պահանջը զայրացնում է, բայց Բոմելին սպառնում է աղջկա խնդրածի մասին հայտնել Գրյազնոյին։ Սաբակինի տանից լսվում է Լյուբաշայի համար ատելի Մարֆայի ծիծաղը, վորը Գրյազնոյի սիրուհուն ստիպում է համաձայնելու Բոմելիի առաջարկին։ Գործողությունը վերջանում է Ալեքսանդրովսկայա արվարձանի պալատից դուրս յեկող հարբած օպրիչնիկների յերգով։

## 3-րդ գործողություն

Վաճառական Սաբակինի տունը։ Բեմի վրա յեն՝ Սաբակինը, Լըկովը և Գրյազնոյը։ Լըկովին հուզել է այն հանգամանքը, վոր մյուս աղջիկների հետ Մարֆային նույնպես պալատ են տարել՝ հարսնատեսի—չե՞ վոր այդ աղջիկներից է, վոր Թագավորը հարսնացու պետք է ընտրի իր համար։ Գրյազնոյը կեղծելով վշտակցում է Լըկովին։ Գալիս է Դունյաշայի մայրը՝ Դոմնա Իվանովնա Սաբուրովան. նա հիացմունքով է պատմում



հարսնատեսի և այն մասին, թե ինչպես Թագավորը հատուկ ուշադրություն դարձրեց իր Դունյաշայի վրա։ Բարի լուրն ուրախացնում է Լըկովին։ Գրյազնոյն առաջարկում է հարսնացուի և փեսացուի կենացը ու գավաթները գինի է լցնում։ Մյուսների համար աննկատելի կերպով հարսնացուի գավաթի մեջ լցնում է Բոմելիից ստացած դեղը։

Մարֆայի, Դունյաշայի և Սաբուրովայի հետ ներս է մտնում Սաբակինը։ Գրյազնոյը գավաթները մատուցում է փեսացուին և հարսնացուին։ Սկսվում է խնդությունը, վորն ընդհատվում է Մարֆայի դայակ Պետրովնայի գալստյամբ.—վերջինս տեղեկացնում է, վոր գալիս են բոյարինները՝ Թագավորի վճիռը հաղորդելու։

Ներս է մտնում Մալյուտա Սկուրատովը և հաղորդում է, վոր Թագավորը վերջնականապես ընտրել է Մարֆային։ Մարֆան—Թագավորի հարսնացուն է։

## 4-րդ գործողություն

Թագավորի ապարանքը։ Սաբակինը մորմոքվում է իր աղջկա անհասկանալի հիվանդության պատճառով։ Սաբուրովան փորձում է մխիթարել նրան։ Մտնում է Գրյազնոյը, վորը գալիս է Թագավորի հանձնարարությամբ Սաբակինի աղջիկ Մարֆայի, այժմ արդեն Թագավորի հարսնացուի մոտ։ Գրյազնոյը հարցնում է Մարֆայի առողջությունը։ Մարֆան ասում է, վոր ինքն առողջ է և վոր այն խոսքերը, թե իրեն կախարդությամբ «վնասել» են, սուտ են։ Գրյազնոյը հաղորդում է Մարֆային, վոր նրա նախկին նշանած Լըկովը խոստովանել է, թե մտադիր է յեղել կախարդական դեղի միջոցով Մարֆային վնասել և դրա համար Թագավորի հրամանով Գրյազնոյը մահապատժի յե յենթարկել Լըկովին։ Այս լսելով՝ Մարֆան ուշաթափվում է։

Ուշքի գալով, Մարֆան սիրալիր վերաբերմունք է ցույց տալիս Գրյազնոյին, իր մեռած նշանածի անունով կոչելով նրան։

Մարֆայի զառանցանքը ցնցում է Գրյազնոյին, վորը խոստովանում է իր վոճրագործությունը։ Բոյարիններին նա պատմում է, վոր ինքն անտեղի յե զրպարտել Լըկովին և վոր Մարֆային ինքն է թունավորել՝ նրան կախարդական դեղ տալով։ Մարֆան շարունակում է զառանցել սիրո մասին, Գրյազնոյին Լըկովի տեղ ընդունելով։

Գալիս է Լյուբաշան։ Նա խոստովանում է Գրյազնոյին, վոր կախարդական դեղը տալու մեղավորն ինքն է, Լյուբաշան,

և վոչ թե Բոմելին։ Մոլեգնած Գրյազնոյը սպանում է Լյուբաշային, իսկ ինքը վորոշում է գնալ Իվան Թագավորի մոտ և «աղաչել, վոր նա իրեն այնպիսի տանջանքների դատապարտի, վորպիսին չեն ունենալու նույնիսկ մեղավորները դժոխքում»։

Գրյազնոյին դուրս են տանում։ Մարֆան քնքշորեն հրաժեշտ է տալիս նրան, շարունակելով նրան կոչել սպանված Լըկովի անունով։

# ЦАРСКАЯ НЕВЕСТА

## I действие

Горница в доме боярина Грязного. Грязной погружен в глубокое раздумье о полюбившейся ему красавице—девушке. Он засылал к отцу сватов, но получил отказ, так как девушка уже обещана другому—Ивану Лыкову.

Приход гостей прерывает раздумье—Грязного. Входят опричники с Малютой Скуратовым, Иван Лыков и лекарь—Бомелий.

Лыков рассказывает о чужих краях, из которых он недавно возвратился.

Входят гусляры и хор песенников, запевающих песню во славу царя. Эта песня сменяется плясовой песней „Яр-хмель“.

Входит любовница Грязного—Любаша. По просьбе гостей она поет протяжную песню. Гости расходятся. Грязной задерживает Бомелия и просит его продать ему приворотное зелье. Любаша, спрятавшись, подслушивает их разговор.

После ухода Бомелия Любаша обращается к Грязному с упреками. Удар колокола к заутрене прерывает их разговор. Грязной уходит. Любаша клянется отыскать свою соперницу.

## II действие

Александровская слобода под Москвой.

Народ расходится из монастыря после вечерней службы. С песней проходит группа опричников. Из калитки дома лекаря Бомелия выходят два молодых парня

Толпа окружает их и заставляет бросить сверток с лекарствами, полученными от „Колдуна“. Постепенно народ расходится. У ворот своего дома появляется Марфа, дочь купца Собакина, со своей подругой Дуняшей и няней Петровной. Марфа рассказывает подруге о своем женихе—Иване Лыкове.

Мимо них проходит царь Иван Васильевич Грозный. Он пристально смотрит на Марфу. Марфа не узнает его, но взгляд царя наводит на нее ужас. Царь медленно удаляется.

Появляется Лыков и отец Марфы. Все вместе они входят в дом. К окну дома Собакина подкрадывается Любаша. Она хочет видеть свою соперницу. Красота Марфы поражает ее. Она решает избавиться от соперницы. Постучав в окно дома Бомелия, Любаша просит у него зелья, „чтоб не совсем сгубило человека, а извело бы только красоту“. Бомелий требует в уплату за такое зелье любви Любаши.

Любаша возмущена, но Бомелий грозит рассказать о ее просьбе Грязному. Доносящийся из дома Собакина смех ненавистной Любаше Марфы заставляет любовницу Грязного согласиться на требование Бомелия. Действие заканчивается разгульной песней пьяных опричников, выходящих из ворот дворца Александровской слободы.

### III действие

Дом купца Собакина. На сцене Собакин, Лыков и Грязной. Лыков взволнован тем, что Марфа в числе прочих девушек привезена во дворец, на смотрины—царь выбирает себе невесту. Грязной притворно сочувствует Лыкову. Входит Домна Ивановна Сабурова, мать Дуняши. Она восхищенно рассказывает о смотринах и о том, что царь особое внимание уделил ее Дуняше. Лыков обрадован добрыми вестями. Грязной наливает в чарки мед, чтобы поздравить жениха и невесту. В чарку невесты он подсыпает порошок Бомелия.



Входит Собакин с Марфой, Дуняшей и Сабуровой. Грязной подносит чарки жениху и невесте. Начинается веселье, которое прерывается няней Марфы, Петровной, извещающей о приходе бояр с „царским словом“.

Входит Малюта Скуратов и сообщает решение царя, остановившего свой выбор на Марфе. Марфа—царская невеста.

### IV действие

Царский терем. Собакин горюет по поводу непонятной болезни дочери-царевны. Сабурова пытается утешить его. Входит Грязной с докладом от царя к дочери Собакина, царской невесте. Он спрашивает Марфу о здоровье. Марфа говорит, что она здорова и что речи о том, что ее „испортили“, лживы. Грязной сообщает Марфе, что ее бывший жених Лыков сознался в намерении извести Марфу зельем и за то казнен им, Грязным, по повелению государя. Марфа лишается чувств.

Очнувшись, она ласково обращается к Грязному, называя его именем своего мертвого жениха.

Потрясенный бредом Марфы, Грязной сознается в своем преступлении. Он рассказывает боярам, что Лыков им оклеветан напрасно и что Марфу погубил он, поднеся ей приворотное зелье. Марфа продолжает грезить о любви, принимая Грязного за Лыкова.

Появляется Любаша. Она признается Грязному в том, что зелье подменила она, а не Бомелий, как думал Грязной. Грязной в ярости убивает Любашу, а сам решается итти к царю Ивану и „вымолить себе такие муки, каких не будет грешникам в аду“.

Грязного уводят. Марфа нежно с ним прощается, продолжая называть его именем убитого Лыкова.

ՀՀ Ազգային գրադարան
NL0938258

23 АПР 1940 238

11
29057

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

Պետհրատի տպարան, Գլ. լիտգոր՝ Զ—1073. Պատվեր 143. Տիրաժ 1000